Դեսպան Ֆուկուշիման ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը

Մարտի 11-ին՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժից 11 տարի անց, դեսպան Ֆուկուշիման ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը Սպիտակ քաղաքում՝ 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնում: Սպիտակում 2012թ.-ին տեղի կամավորների նախաձեռնությամբ տեղադրվել է Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված խաչքար: Այդ ժամանակից ի վեր ամեն տարի մարտի 11-ին այստեղ անցկացվում է երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողություն:

Բացի դեսպան Ֆուկուշիմայից արարողությանը ներկա էին նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Փիլոյանը, Լոռու մարզպետ պարոն Խաչատրյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Նիկողոսյանը, Լոռու մարզային փրկարարական վարչության անդամները, ինչպես նաև Սպիտակ քաղաքի մի շարք քաղաքացիներ: Արարողության ընթացքում մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի և Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված խաչքարերին՝ աղոթելով զոհերի համար:

Դեսպան Ֆուկուշիման աղետների կանխարգելման ոլորտում համագործակցության վերաբերյալ մտքեր փոխանակեց նախարար Փիլոյանի և այլ մասնակիցների հետ:

Նախարար Փիլոյանի ողջույնի խոսքը



Դեսպան Ֆուկուշիմայի ողջույնի խոսքը

Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված հուշարձանը

Դեսպան Ֆուկուշիման ծաղկեպսակ է դնում Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված հուշարձանին